ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Անի Տերտերյան» ԱՁ-ի միջև 2021 թվականի ապրիլի 16-ին կնքված N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՀԱՄԾ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «14» մայիսի 2021թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «Անի Տերտերյան» ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով Պատվիրատուի և Կատարողի միջև 2021 թվականի ապրիլի 16-ին կնքված **N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՀԱՄԾ-1** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.8 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին 2021 թվականի ապրիլի 16-ին կնքված N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՀԱՄԾ-1 ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացույցով սահմանված ծառայությունների մատուցման ժամանակացույցը՝ **(Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվարից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում)** փոփոխել համաձայն պայմանագրի 7,8 կետի:

1.2 Ծառայությունների մատուցման վերջնաժամկետ սահմանել 2021թվականի հունիսի 14-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Անի Տերտերյան» ԱՁ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք. Երևան, Ավան-Առինջ 1/8շ. բն. 30
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 157007284110100
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 67032832
Ռեկտոր _____ Դ. Գալոյան	Տնօրեն _____ Ա. Տերտերյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ